

Հարցաշար
«Քրեական դատավարություն» առարկայի
ասպիրանտուրայի ընդունելության քննության
(մասնագիտական)

1. Քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի փոխհարաբերակցության հիմնահարցերը:
2. Քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը և սահմանները:
3. Քրեական հետապնդում. հասկացությունը, սուբյեկտները և նրանց լիազորությունները:
4. Մրցակցության սկզբունքը և կողմերի իրավական վիճակը դատական քննության փուլում:
5. Անմեղության կանխավարկածի տեղը և դերը քրեական դատավարության սկզբունքների համակարգում:
6. Քրեական գործի արդարացի քննության սկզբունքի էությունը և նշանակությունը քրեական դատավարությունում:
7. Կալանքի՝ որպես խափանման միջոցի տեղը և դերը քրեական դատավարությունում:
8. Դատարանը որպես արդարադատություն իրականացնող մարմին: Նրա լիազորությունների ընդհանուր բնութագիրը:
9. Հետաքննության մարմնի և քննիչի իրավական վիճակը քրեական դատավարությունում:
10. Մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում:
11. Դատավարությանը մասնակցող այլ անձանց իրավական վիճակը քրեական դատավարությունում:
12. Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը քրեական դատավարությունում:
13. Ապացուցման առարկան և սահմանները քրեական դատավարությունում:
14. Ապացույցների տեսակների ընդհանուր բնութագիրը: Ապացուցման սուբյեկտները: Ապացուցման պարտականություն:
15. Նախաքննության ընթացքում քրեական դատավարության սկզբունքների կիրառման առանձնահատկությունները և դրանց ապահովման երաշխիքները:
16. Անձին որպես մեղադրյալը ներգրավելը և մեղադրանքի առաջադրումը:

17. Հարցաքննության տեղը և դերը քննչական գործողությունների համակարգում:
18. Քրեական գործի կասեցման հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը:
19. Դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:
20. Դատախազական հսկողության և դատական վերահսկողության փոխհարաբերակցությունը քրեական դատավարությունում:
21. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը:
22. Դատաքննության ընհանուր բնութագիրը և դատավարական կարգը:
23. Դատական քննության արագացված կարգի էությունը և նշանակությունը:
24. Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները. «Դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունը»:
25. Վճռաբեկության կարգով դատական որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտները, բողոքարկման հիմքերը և կարգը:
26. Նոր և նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով գործի նորոգումը. հիմքերը, ժամկետները և կարգը:
27. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի հասկացությունը, նշանակությունը և դատավարական կարգը:
28. Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները: